

ԿԱՐԳ

«Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպությանը անդամագրվելու և անդամավճարների վճարման

1. «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «կազմակերպություն») գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում 2004 թվականի ապրիլի 23-ին:

Կազմակերպության անդամ կարող է դառնալ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով.

ա) ընդունում է կազմակերպության կանոնադրությունը, դրա նպատակներն ու խնդիրները,

բ) ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը,

գ) կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կարգով մուծում է անդամավճար,

դ) իր գործունեությամբ կարող է նպաստել կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացմանը,

2. Անձը, որը կազմակերպության հիմնադիր չէ կազմակերպության անդամ կարող է դառնալ իր կամքի ազատ արտահայտման հիման վրա՝ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Մինչև տասնչորս տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ իր օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Անձի անդամակցությունը կազմակերպությանը նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք չէ:

3. Կազմակերպության ցանկացած անդամ իրավունք ունի՝

ա) անկախ կազմակերպության մյուս անդամների ցանկությունից ցանկացած ժամանակ անարգել դուրս գալ կազմակերպության անդամությունից,

բ) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել կազմակերպության կառավարմանը,

զ) ծանոթանալ կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները: Պատճենների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը,

դ) կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել կազմակերպության վերադաս մարմիններ՝ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով սպառիչ տեղեկություն ստանալ կազմակերպության գործունեության մասին,

ե) կարող է ունենալ նաև օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա) պահպանել «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կազմակերպության կանոնադրության և կազմակերպության ժողովի սահմանած պահանջները,

բ) չհրապարակել կազմակերպության, նրա գործունեության և ծրագրերի վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

Կազմակերպության անդամը կարող է ունենալ օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

5. Կազմակերպությունն իր անդամների համար երաշխավորում է հետևյալ հնարավորությունների և ռեսուրսների տրամադրումը, որը ներառում է սակայն չի սահմանափակվում ներքոշարադրյալով.

ա) մասնակցել Իրավական ուղեցույցի ծրագրերին և միջոցառումներին,

բ) օգտվել Իրավական ուղեցույցի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ և այլ համապատասխան կրթական, տեղեկատվական և այլ առկա ռեսուրսներից,

գ) Իրավական ուղեցույցի ինտերնետային էջում տպագրել Իրավական ուղեցույցի նպատակներին և խնդիրներին համապատասխան մշակված հոդվածներ, նյութեր և այլ փաստաթղթեր,

դ) ստանալ մասնագիտական խորհուրդներ և փորձառություններ պետական դատարաններում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում փաստաբանական գործունեություն իրականացնող փաստաբաններից և իրավաբաններից,

ե) տեղյակ լինել մարդու իրավունքների եվրոպական և ներպետական պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ կրթական

և տեղեկատվական բնույթի միջոցառումներին և ռեսուրսներին,

զ) ստանալ մասնագիտական հնարավոր այլ օգուտներ, ինչպես օրինակ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և համապատասխան պրակտիկայի, ազգային օրենսդրության տեսության և գործնական կիրառման վերաբերյալ խորացված ուսուցման դասընթացների և համապատասխան այլ դասընթացների, կոնֆերանսների և սեմինարների մասին տեղեկություններ և մասնակցության հնարավորություններ:

6. Կազմակերպության անդամ դառնալու համար անձը պետք է կազմակերպության նախագահին ներկայացնի գրավոր դիմում, ինչպես նաև փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանված է սույն կարգի հավելված 1-ում:

7. Կազմակերպության անդամ դառնալու մասին դիմումը քննարկում և կազմակերպությանն անդամագրվելու կամ անդամ դառնալու դիմումը մերժելու մասին որոշում է ընդունում կազմակերպության նախագահը՝ կազմակերպությանն անդամագրվելու մասին դիմումը ներկայացնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում: Կազմակերպության նախագահի բացակայության դեպքում երկամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է (շարունակվում է) նախագահի իր պարտականությունների կատարմանը վերադառնալու օրից:

8. Նախագահը կարող է կազմակերպությանն անդամագրվելու հավակնորդի վերաբերյալ հայցել Կազմակերպության անդամների կարծիքը:

9. Կազմակերպության նախագահը կազմակերպությանն անդամագրվելու մասին դիմումի վերաբերյալ որոշումն ընդունում է հավակնորդի կողմից ներկայացրած դիմումի, փաստաթղթերի, տվյալների հիման վրա և նրա հետ հարցազրույցի արդյունքում:

10. Հարցազրույցի ընթացքում անդրադարձ է կատարվում առնվազն հետևյալ հարցերին.

ա) հավակնորդի կրթությունն ու մասնագիտական հմտությունները,

զ) հավակնորդի բարոյական հատկանիշները,

է) կազմակերպությանն անդամակցելու հավակնորդի նպատակները (հաշվի են առնվում կազմակերպության նպատակները և խնդիրները, ինչպես նաև գործունեության շրջանակը):

11. Կազմակերպության անդամը պետք է անցնի երեք ամիս փորձաշրջան, որից հետո կազմակերպության նախագահը կարող է քննարկել կազմակերպության անդամի՝ անդամությունից ազատելու հարցը, եթե անդամն այդ ժամանակահատվածում չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել կազմակերպության կանոնադրության պահանջները կամ դրսևորել է կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կազմակերպության նպատակներին ու խնդիրներին անհամապատասխան վարքագիծ՝ խախտելով կազմակերպության ներքին կարգապահական կանոնները:

12. Կազմակերպության անդամը կարող է կազմակերպության անդամությունից դուրս գալ նաև կազմակերպության նախագահին ներկայացրած կազմակերպության անդամությունից դուրս գալու մասին իր դիմումի հիման վրա:

13. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ պետք է վճարի անդամավճար, որի չափերը, վճարման կարգն ու ժամկետները սահմանված են սույն կարգի 2-րդ հավելվածում: Կազմակերպության անդամի կողմից սույն կարգով սահմանված անդամավճարի մուծման ժամկետների խախտումը կամ անդամավճարը լրիվ չվճարելը հիմք է կազմակերպության անդամի անդամությունից ազատելու հարցի քննարկման համար:

Հավելված
1
«Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպությանն
անդամագրվելու և անդամավճարների
վճարման» կարգի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ
ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

«Իրավական ուղեցույցի»-ն անդամագրվելու հավակնորդները պետք է լրացնեն անդամության համար նախատեսված ձևը և կից ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպությանն անդամագրվելու մասին, ներառյալ անդամագրվելու պատճառների և ակնկալիքների մասին,
2. 3X4 չափի մեկ լուսանկար,
3. բարձրագույն ուսումնական հաստատության ավարտական դիպլոմի, այլ ուսուցման դասընթացներ ավարտելու և սեմինարների, կոնֆերանսների վերաբերյալ վկայականների, արտոնագրերի պատճենները, եթե այդպիսիք առկա են,
4. մասնագիտական կազմակերպության անդամությունը հավաստող վկայագրի պատճեն, եթե այդպիսին առկա է,
5. կարող են նաև պահանջվել համապատասխան երաշխավորագրեր և այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Հավելված 2
«Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպությանն
անդամագրվելու և անդամավճարների
վճարման» կարգի

Անդամավճարների չափը և վճարման կարգը

<i>Անդամի կարգավիճակը</i>	<i>Անդամավճարի չափը ՀՀ դրամ</i>	<i>Վճարման կարգը</i>
Ուսանող	500 դրամ մեկ ամսվա համար	Առաջին ամսվա համար կազմակերպության անդամ դառնալու օրվանից հետո՝ ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում, իսկ հաջորդ ամսեկան վճարումները՝ նախորդ վճարումը կատարելուց հետո ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում
իրավաբան, փաստաբան ինչպես նաև իրավաբանի մասնագիտություն ունեցող այլ ֆիզիկական անձ	1000 դրամ մեկ ամսվա համար	Առաջին ամսվա համար կազմակերպության անդամ դառնալու օրվանից հետո՝ ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում, իսկ հաջորդ ամսեկան վճարումները՝ նախորդ վճարումը կատարելուց հետո ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում

<p>Մարդու իրավունքների պաշտպանությանը հետաքրքրված և/կամ զբաղվող ցանկացած ֆիզիկական անձ</p>	<p>1000 դրամ մեկ ամսվա համար</p>	<p>Առաջին ամսվա համար կազմակերպության անդամ դառնալու օրվանից հետո՝ ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում, իսկ հաջորդ ամսեկան վճարումները՝ նախորդ վճարումը կատարելուց հետո ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում</p>
<p>իրավաբանական անձ</p>	<p>5000 դրամ մեկ ամսվա համար</p>	<p>Առաջին ամսվա համար կազմակերպության անդամ դառնալու օրվանից հետո՝ ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում, իսկ հաջորդ ամսեկան վճարումները՝ նախորդ վճարումը կատարելուց հետո ոչ ուշ քան 35 օրվա ընթացքում</p>
<p>Իրավաբաններ և/կամ փաստաբաններ, ովքեր իրավական Ուղեցույցի անունից գործեր են ներկայացնում Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանում</p>	<p>Դիմումատուի հետ կնքած պայամանագրով նախատեսված իրավաբանին/փաստաբանին տրամադրվելիք գումարից՝ Եվրոպական դատարանի կողմից փաստացի դրամադրած գումարի 1%-ը</p>	<p>Գումարը փաստացի ստանալու օրվանից հետո ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում</p>